ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Միլենա Հովհաննիսյան, Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Սլովենիայի Հանրապետություն (ք" Լյուբլյանա), ս.թ. մարտի 29-ից 30-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը.

Սլովենիայի Հանրապետության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Երկու երկրների ֆինանսների նախարարությունների միջև կանոնավոր երկկողմ (միջգերատեսչական) համագործակցության հաստատում, «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Սլովենիայի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև տեխնիկական համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի ստորագրում

5. Քննարկված թեմաները

Կողմերն անդրադարձել են երկու երկրների ընթացիկ տնտեսական իրավիճակին և զարգացման հիմնական միտումներին: Սլովենական կողմից ներկայացվել են առևտրի դիվերսիֆիկացմանն ուղղված աշխատանքները և արևմտյան ու հյուսիսատլանտյան կառույցներին այդ երկրի ինտեգրման փորձը: Քննարկվել են երկու երկրներում բյուջետային, հարկային, պետական ֆինանսների կառավարման ոլորտներում առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարման ուղիները:

Գործընկերներին է ներկայացվել «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, մասնավորապես վերջինիս նպատակները՝ բաց սահմաններ, ապաշրջափակված ենթակառուցվածքներ, ակտիվ տնտեսական, քաղաքական և մշակութային կապեր, որոնք, անհրաժեշտ են տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղություն հաստատելու համար, ինչպես նաև նախագծի իրագործման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող աշխատանքները:

Հայկական կողմը շնորհակալություն է հայտնել սլովենական կողմին՝ 2023թ. ԿԽՄԿ միջոցով ԼՂ բռնի տեղահանվածների կարիքները հոգալու նպատակով Հայաստանին 120.000 եվրո նվիրաբերելու առնչությամբ և ընդգծել երկու երկրների միջև վերջին շրջանում փոխայցելությունների ինտենսիվացումը, ինչը վկայում է երկկողմ գործընկերության ամրապնդման ու ակտիվացման մասին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակում նախարարի գլխավորած պատվիրակությունը այցելել է նաև Լյուբլյանայի Ֆինանսական զարգացման կենտրոն (CEF), որտեղ կազմակերպության ղեկավարության հետ քննարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության ՝ որպես տվյալ ոլորտի գիտելիքների ու փորձառության լավագույն ինստիտուտի, կարողությունների խթանման համատեքստում համագործակցության հնարավորությունները:

Քննարկվել են վերջինիս զարգացման ու արդիականացման «ճանապարհային քարտեզի» մշակման նպատակով առաջիկայում անհրաժեշտ խորհրդակցությունների անցկացման հետ կապված հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Սլովենիայի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև տեխնիկական համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր):

Հուշագրով ստանձնած պարտավորություններին համապատասխան՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել ակտիվացնել տեխնիկական և մասնագիտական գիտելիքների շուրջ փորձի փոխանակումը և տեղեկատվության փոխանակումը

կարողությունների զարգացման այնպիսի ասպեկտների շուրջ, ինչպիսիք են քաղաքականությունների մշակումը, որոշումների կայացման գործընթացների արդյունավետությունը, ոլորտի օրենսդրության կատարելագործումը և այլն:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Նախանշված ուղղություններով համագործակցությունը նախատեսվել է իրականացնել նախարարությունների աշխատակիցների ճանաչողական այցերի, վերապատրաստման ծրագրերին և սեմինարներին, աշխատաժողովներին և ֆորումներին մասնակցության տեսքով:

Առաջարկվել է շարունակել երկխոսությունը ս.թ. մայիսին Երևանում կայանալիք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի տարեկան ժողովի շրջանակներում, որին ակնկալվում է նաև Սլովենիայի ֆինանսների նախարարի գլխավորած պատվիրակության մասնակցությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

3 ապրիլ 2024թ.